Իլոնա Գրիգորյան
Հայ-Ռուսական համալսարանի հայցորդ,
«Արտոնոն» ՍՊԸ-ի իրավաբան
Էլ.հասցե՝ ilona.grigoryan.87@mail.ru

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԶԴՄԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ և ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Սույն հոդվածում հեղինակը քննարկել է տարբեր սուբյեկտների կողմից կազմակերպված հանցավորության դեմ իրականացվող պայքարի մեխանիզմները, որն ուղղված է հանցավոր խմբերի և համագործակցությունների բացահայտմանը, ներկայացված են օրենսդրական առաջարկներ կազմակերպված հանցավորության դեմ իրականացվող պայքարը արդյունավետ դարձնելու ուղղությամբ: Ընդգծված է օրենսդրական փոփոխությունների, առանձին ստորաբաժանումներ ստեղծելու և նպատակային ծրագրեր մշակելու անհրաժեշտությունը:

Հիմնաբառեր. կազմակերպված հանցագործություն, ահաբեկչություն, փողերի լվացում, հանցավոր գործունեություն, կանխարգելում, հակազդում:

Ներածություն

Կազմակերպված հանցավորության ոլորտը ընդգրկում է տնտեսական ոլորտում տարատեսակ հանցավոր գործողություններ, կոռուպցիա, թմրանյութերի ապօրինի շրջանառություն, մարդկանց առևտուր և այլն: Համաձայն ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության՝ ՀՀ ազգային անվտանգությանն անմիջական սպառնալիք են հանդիսանում ահաբեկչությու-

նը, զանգվածային ոչնչացման զենքի տարանցումն ու տարածումը, թմրանյութերի ապօրինի շրջանառությունը, փողերի լվացումը և մարդկանց առևտուրը՝ թրաֆիքինգը: Համապատասխանաբար, այս տեսակի հանցավոր գործողություններին հակազդումն իրավապահ մարմինների, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմինների հիմնական գործառույթներից մեկն է:

Կազմակերպված հանցավորության դեմ պայքարը իրենից ներկայացնում է կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մեջ ներառված իրավասու մարմինների կողմից ձեռնարկված միջոցների համադրություն, որն ուղղված է հանցավոր խմբերի և համայնքների բացահայտմանը, նրանց գործունեության կանխարգելմանը, ինչպես նաև կազմակերպված հանցավորության գոյությանը նպաստող պատճառների և գործընթացների բացահայտմանը: Ուսումնասիրության նպատակ է հանդիսանում կազմակերպված հանցավորության կանխարգելման սուբյեկտների ուսումնասիրությունը, նրանց գործառույթների վերլուծությունը, առաջարկություններ ներկայացնելը վերոնշյալ գործունեությունը արդյունավետ դարձնելու նպատակով:

Մեթոդ

Կազմակերպված հանցավորության դեմ հակազդման սուբյեկտների ուսումնասիրությունն իրականացվել է արևմտյան մի շարք երկրների նորմատիվ ակտերի և իրավակիրառ պրակտիկայի վերլուծության հիման վրա: Հետազոտության ընթացքում կիրառվել են անալիզի և սինթեզի, ինչպես նաև իրավահամեմատական մեթոդները:

Արևմտյան երկրներում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի սուբյեկտների առանձնահատկությունները

Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մարմին է հետաքննության մարմինը, որն իրականացնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն՝ օրենքով նախատեսված լիազորությունների համաձայն: Նման մարմինը ձեռնարկում է օրենքով նախատեսված միջոցներ՝ կազմակերպված հանցավոր խմբերի ստեղծումը, դրանց կազմակերպիչների, առաջնորդների, այլ մասնակիցների գործունեությունը կանխարգելելու, կանխելու և բացահայտելու ուղղությամբ (ՀՀ նախագահի 1992 թ. սեպտեմբերի 1-ի թիվ ՆՀ-150 հրամանագիրը):

Ելնելով վերոհիշյալ սահմանումից, Հայաստանում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի սուբյեկտներ պետք է համարվեն ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության մարմինները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն ծավալելու լիազորություններով օժտված այլ մարմիններ: Բացի վերը նշված մարմիններից, տարբեր պետական մարմիններ՝ իրենց լիազորությունների սահմաններում նպաստում են կազմակերպված հանցավորության

դեմ պայքարին ուղղված գործողություններին: Այս պետական կառավարման մարմինները միասին կազմում են կազմակերպված հանցավորության դեմ պայքարի սուբյեկտների համակարգ:

ՀՀ-ում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հիմնական բեռը վերապահվում է ոստիկանությանը, ազգային անվտանգության ծառայությանը, Պետական եկամուտների կոմիտեի օպերատիվ ստորաբաժանմանը: Իրենց իրավասությունների սահմաններում պետական այլ մարմիններ, մասնավորապես՝ դատախազությունը, քրեակատարողական համակարգի մարմինները, ոստիկանության ոչ մասնագիտացված ստորաբաժանումները, հարկային մարմինները, սահմանային ծառայության մարմինները, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը նույնպես նպաստում են կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գործունեությանը:

Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի սուբյեկտներին կարելի է դասակարգել ըստ տարբեր չափորոշիչների: Մասնավորապես, կազմակերպված հանցավորության դեմ պայքարի սուբյեկտների շարքում, կախված նրանց իրավասություններից, կարելի է առանձնացնել երկու խումբ՝ ընդհանուր բնույթի հակազդման սուբյեկտներ և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասնագիտացված ստորաբաժանումներ: Պետությունների մեծ մասում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասնագիտացված ստորաբաժանումներ ստեղծվում և գործում են ներքին գործերի համակարգում, անվտանգության ծառայություններում, թմրամիջոցների շրջանառության վերահսկման ստորաբաժանումներում, դատախազություններում, քրեակատարողական ծառայություններում և այլն (Иванцов, 2018, էջեր 230–231):

Գոյություն ունի կազմակերպված հանցավորության դեմ պայքարի սուբյեկտների մեկ այլ դասակարգում: Օրինակ՝ Ղրղզստանի Հանրապետությունում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մեջ ներգրավված պետական մարմինների համակարգը կազմված է կազմակերպված հանցավորությանը հակազդող և կազմակերպված հանցավորության դեմ պայքարին աջակցող մարմիններից:

Կազմակերպված հանցավորության դեմ պայքարող մարմինների թվին են դասվում ներքին գործերի մարմինները, որոնք ապահովում են փոխգործակցությունը կազմակերպված հանցավորության դեմ պայքարում, տեղեկատվության ձեռք բերումը, վերլուծությունը և պահպանումը, ազգային անվտանգության մարմինը, քրեակատարողական համակարգի մարմինը, թմրամիջոցների վերահսկման մարմինը, ֆինանսական ոստիկանության մարմինը, մաքսային մարմինը:

Կազմակերպված հանցավորության դեմ պայքարին աջակցող մարմիններն են՝ դատախազությունը, հարկային մարմինները, պաշտպանության մարմինը, ֆինանսական հետախուզության մարմինը, պետական գրանցման միասնական ռեգիստրը, Կենտրոնական բանկը, Հաշվիչ պալատը, տեղական ինքնակառավարման մարմինները, տեղական պետական կազ-

մակերպությունները, արտաքին գործերի ոլորտում լիազորված պետական մարմինը՝ համակարգելով կազմակերպված հանցավորության դեմ պայքարի միջազգային համագործակցության ընդհանուր խնդիրները (Закон Кыргызской Республики N 122, հոդվ. 5):

Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի սուբյեկտներին, կախված տարածքային իրավասությունից, կարելի է տարանջատել որպես ազգային, տարածաշրջանային և համընդհանուր մակարդակի հակազդման սուբյեկտների: ՀՀ-ն ակտիվ մասնակից է կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ինչպես տարածաշրջանային նախաձեռնություններին և կազմակերպություններին (ԱՊՀ, ԵԽ շրջանակներում), այնպես էլ համընդհանուր մակարդակում (ՄԱԿ շրջանակներում):

Ինչպես ցույց է տալիս տարբեր պետությունների փորձը և պրակտիկան, հանցավորության դեմ առավել արդյունավետ պայքարի համար ստեղծվում են կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հատուկ ստորաբաժանումներ:

Արտասահմանյան շատ երկրներում ձևավորվել և (կամ) ստեղծվել են ստորաբաժանումներ՝ օժտված կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հատուկ իրավասություններով: Այսպիսով, ԱՄՆ-ում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գործում համակարգող է հանդիսանում Արդարադատության նախարարությունը, մասնավորապես՝ դրա մասնագիտացված ստորաբաժանումը՝ կազմակերպված հանցավորության և ռեկետի /դրամաշորթության/ դեմ պայքարի բաժինը: Այս գերատեսչությունը համակարգում է նախարարության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի բոլոր ծրագրերը, ինչպես նաև իրականացնում է կազմակերպված հանցավորության հետ առնչվող գործերի հետաքննությունն ու պատասխանատվության ենթարկելը: Կազմակերպված հանցավորությանը բնորոշ առանձնահատկություններից ելնելով, Կազմակերպված հանցավորության և ռեկետի դեմ պայքարի բաժինը սերտ համագործակցում է իրենց լիազորությունների սահմաններում կազմակերպված հանցավորության դեմ պայքարում ներգրավված այլ գերատեսչությունների հետ: Դրանց թվին են դասվում Հետաքննությունների դաշնային բյուրոն (ՀԴԲ), Թմրամիջոցների վերահսկման վարչությունը և ԱՄՆ գլխավոր դատախազին կից կազմակերպված հանցավորության հակազդման խորհուրդը (FederalBureauofInvestigation, FBI):

Հատկանշական է, որ 1992-ին Ռուսաստանում, ԽՍՀՄ փլուզման հետ մեկտեղ, Ռուսաստանի ՆԳՆ համակարգում ստեղծվել է կազմակերպված հանցավորության գլխավոր վարչությունը (ԿՀԳՎ), որը հետագայում՝ 1998 թվականից ի վեր վերափոխվեց Ռուսաստանի Ներքին գործերի նախարարության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության (ԿՀԴՊԳՎ): Մի քանի տարի անց, ԿՀԴՊԳՎ ընդգրկվեց Ռուսաստանի ներքին գործերի նախարարության քրեական ոստիկանության ծառայությունում, այնուհետև դարձավ կազմակերպված հանցավորության և ահաբեկչության դեմ պայքարի դեպարտամենտ:

Այնուամենայնիվ, ի տարբերություն շատ պետությունների, որոնք ստեղծել են կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասնագիտացված ստորաբաժանումներ, մի քանի տարի անց Ռուսաստանը հրաժարվեց այդ մոտեցումից: Ռուսաստանի Դաշնության Ներքին գործերի նախարարության կազմակերպված հանցավորության և ահաբեկչության դեմ պայքարի վարչությունը վերակազմավորվել է Ռուսաստանի Դաշնության Նախագահի հրամանագրով: Վերակազմավորման ընթացքում դեպարտամենտը բաժանվել է երկու առանձին՝ ծայրահեղականության հակազդման և պետության պաշտպանության ենթակա անձանց պաշտպանության ապահովման դեպարտամենտների:

Ինչ վերաբերում է Խորհրդային Միության նախկին հանրապետություններին, ապա պետք է նշել, որ նրանցից մի քանիսն են միայն ընդունել կազմակերպված հանցավորության դեմ պայքարը կանոնակարգող օրենքներ: Դրանց թվում են Ուկրաինան, Ղրղզստանը և Վրաստանը: «Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կազմակերպչական և իրավական հիմքերի մասին» Ուկրաինայի օրենքն ընդունվել է դեռևս 1993 թ.-ին, դրանով իսկ ստեղծելով կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ստորաբաժանման գործունեության համար կազմակերպչական և իրավական դաշտ: Որպես հատուկ ստորաբաժանման գործունեության հիմնական գործառույթներ սահմանվել են.

Գործունեությունը՝ ուղղված կազմակերպված հանցավոր խմբավորումների չեզոքացմանը հիմնականում միջտարածաշրջանային և միջազգային կապերով, պայթուցիկ սարքերի կիրառմամբ կատարված հանցագործությունների բացահայտում և այլն:

Ղրղզստանի Հանրապետությունում ևս ընդունվել է հատուկ օրենք, որը կարգավորում է կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մարմինների գործունեության շրջանակները: Օրենքը սահմանեց կազմակերպված հանցավորության դեմ պայքարի պետական քաղաքականությունը, կազմակերպչական և իրավական հիմքերը, ուրվագծեց կազմակերպված հանցավորության դեմ պայքարի սուբյեկտների շրջանակը:

Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մարմինների գործունեության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանի Հանրապետությունն իր անկախացումից հետո նույնպես ներգրավվեց կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մեջ: Հատկապես կարևորվում են վերջին տասնամյակում հախաձեռնած գործընթացները: Նախ նշենք Մաքսային ծառայությունը, որը ներկայումս ներառված է ՀՀ ՊԵԿ կազմում: «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-260-Ն օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն 2018 թվականի ապրիլի 9-ից գործում է որպես Պե-

տական եկամուտների կոմիտե, որի կառուցվածքում ստեղծվել է հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչությունը: Այս վարչությանը վերապահված են կազմակերպված հանցավորության դեմ պայքարում ֆինանսական քննություն անցկացնելու որոշակի լիազորություններ: Հարկային համակարգում չարաշահումներից խուսափելու համար վարչությանը վերապահված են հարկային ոլորտում հանցագործությունները կանխարգելելու, օպերատիվ-հետախուզական գործունեություն ծավալելու, հարկային հսկողության ուժեղացման, չարաշահման և կոռուպցիայի փաստերի կանխարգելման, ինչպես նաև Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման խնդիրներ (Хачатрян, 2003, էջեր 285-316): Հարկման արդյունավետ համակարգերը և հմուտ մասնագետները երաշխիք են կազմակերպված հանցավորության դեմ լիարժեք պայքարի համար (Акопян, էջեր 177-178):

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայությունը վերահսկում է ապրանքների, տրանսպորտային միջոցների, ինչպես նաև ֆիզիկական անձանց տեղաշարժը ՀՀ պետական սահմանով: Իր գործառույթներն իրականացնելիս Մաքսային ծառայությունը նպաստում է կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գործողություններին: Մաքսային ծառայության գործունեությունը կարևոր նշանակություն ունի անդրազգային հանցավոր գործունեությանը հակազդելու ոլորտում: Մաքսային ծառայության առջև դրված խնդիրներից պետք է նշել ՀՀ տնտեսական անվտանգության և սահմանային անվտանգության ապահովումը, ապրանքների, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, զենքի և այլ արգելված ապրանքների մաքսանենգ ներկրման/արտահանման, ՀՀ-ից պատմամշակութային արժեքների և ազգային հարստությունների արտահանման կանխման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը:

Հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում պետական կառավարման մարմինների համակարգում հատուկ տեղ են զբաղեցնում ՀՀ դատախազության մարմինները: Ի թիվս այլ խնդիրների, նրանց է վերապահված հետաքննության և նախաքննության օրինականությունը վերահսկելու գործառույթը: Այս լիազորությունների շրջանակներում դատախազության մարմինները վերահսկողություն են իրականացնում մարդու քաղաքացիական իրավունքների ու ազատությունների պահպանման, ինչպես նաև օրենքների կատարման նկատմամբ, այդ թվում՝ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասնագիտացված ստորաբաժանումների կողմից:

Որպես քրեական հետապնդման օրինականությունը վերահսկող մարմին, ինչպես նաև ընդհանուր դատավարական ղեկավարում իրականացնող մարմին, դատախազությունը համակարգում է հետաքննող մարմինների, ինչպես նաև ոստիկանության և ազգային անվտանգության մարմինների գործունեությունը կազմակերպված հանցավոր խմբերի և համայնքների կողմից կատարված հանցագործությունների քննության գործում: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում արդեն 1997-ին գլխավոր դատախազն ընդունել է հրաման «Կազմակերպված հանցավորության համար տարածքա-

յին գերատեսչությունների գործունեության օրինականության նկատմամբ հսկողության կազմակերպման մասին»: Ի կատարումն այս հրամանի, ՌԴ գլխավոր դատախազության գլխավոր քննչական վարչությունում, ինչպես նաև դատախազության մարզային մարմիններում ստեղծվել են գերատեսչություններ՝ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին օրենքների կատարումը վերահսկելու համար: Արդյունավետության բարձրացման և կազմակերպված հանցավոր խմբերի հանցավոր գործողություններին մասնակցելու համար քրեական հետապնդման միջոցառումների համախմբման նպատակով ՀՀ դատախազության կառուցվածքում ստեղծվել են մասնագիտացված ստորաբաժանումներ: Դրանց թվին են պատկանում, օրինակ, Կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությունը, ինչպես նաև թրաֆիքինգի դեմ պայքարի մասնագիտացված ստորաբաժանումը, որը գործում է 2004 թվականից:

Ընդհանուր առմամբ, վերը նշված բոլոր մարմիններն այս կամ այն չափով իրականացնում են կազմակերպված հանցավորության դրսևորումների գրանցման ոլորտում լիազորված մարմինների տեղեկատվական-վերլուծական աշխատանքներ, այդ դրսևորումների պատճառականության ուսումնասիրություն և դետերմինացում, նախորդ փուլերում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունքների գնահատում, կազմակերպված հանցավոր գործունեության հիմնական ուղղությունների, կազմակերպված հանցավոր խմբերի և համայնքների ղեկավարների և անդամների վերաբերյալ տվյալների գնահատում (Акопян, էջեր 168–169):

ՀՀ-ում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ընդհանուր բնույթի մարմիններն են՝ ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ Նախագահը, ՀՀ Կառավարությունը, դատական իշխանությունները, ՀՀ Կենտրոնական բանկը և այլն:

ՀՀ Սահմանադրությամբ սահմանվում է, որ ՀՀ օրենսդիր մարմին է հանդիսանում Ազգային ժողովը: ՀՀ Ազգային ժողովին է վերապահված ընդհանուր առմամբ հանցավորության հակազդման և մասնավորապես՝ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի իրավական հիմք հանդիսացող օրենսդրական ակտերի մշակման, ստեղծման, փոփոխման և ընդունման գործառույթը:

Իր լիազորությունների շրջանակներում Հանրապետության Նախագահը ստորագրել է «Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ուժեղացմանն ուղղված միջոցառումների մասին» հրամանը, ինչպես նաև իր կարգադրությամբ գործողության մեջ է դրել 2011 թվականին մշակված 2012–2013թթ. Հայաստանի Հանրապետությունում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ազգային ծրագրի իրականացման պլան: Համապատասխան մասնագիտացված մարմինները պարտավոր են պարբերաբար զեկուցել Նախագահին՝ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ոլորտում կատարված աշխատանքների վերաբերյալ:

ՀՀ կառավարությունը մշակում և իրականացնում է պետության ներքին

քաղաքականությունը: Կառավարությանը վերապահված է հասարակական կարգի պահպանության ապահովման, օրենքի գերակայության ամրապնդման և քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները ապահովող միջոցառումների համակարգման գործառույթ:

Գործունեության շրջանակներում տարբեր ծառայություններ, ինչպիսիք են ազգային անվտանգության ծառայությունը, ոստիկանությունը, հարկային ծառայությունը և այլն, ինչպես նաև տարբեր նախարարություններ իրենց լիազորությունների շրջանակներում իրականացնում են կազմակերպված հանցավորության դեմ պայքարի միջոցառումներ:

ՀՀ Նախագահի «Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ուժեղացմանն ուղղված միջոցառումների մասին» վերոհիշյալ որոշմամբ ՀՀ Կառավարության վրա դրվեցին որոշակի գործառույթներ՝ ձեռնարկել միջոցներ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Այսպիսով, ՀՀ կառավարությունը պետք է ապահովի իրավապահ և վերահսկող մարմինների համար մեքենայացված տեղեկատվական համակարգի և ցանցերի ֆինանսավորման միջոցները, մասնագիտացված ստորաբաժանումների անհրաժեշտ աշխատանքային և նյութատեխնիկական միջոցներով համալրումը, ներկայացնելը կազմակերպված հանցավորության դեմ պայքարը կանոնակարգող օրենսդրության լրացումներ և փոփոխություններ, մշակելը կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ոլորտում այլ պետությունների և մասնագիտացված միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության հաստատման ուղիներ ապահովելը:

2018 թ. հունիսի 28-ին ՀՀ վարչապետի որոշմամբ հաստատվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության նոր կանոնադրությունը և կառուցվածքը: Բացի Ծառայության գործունեության ավանդական ուղղություններից ուրվագծվել է տնտեսական անվտանգության ապահովման և կոռուպցիային ինստիտուցիոնալ մակարդակով հակազդելու գործառույթը:

ՀՀ Սահմանադրության համաձայն ՀՀ տարածքում արդարադատությունն իրականացվում է ՀՀ դատարանների կողմից: Կազմակերպված հանցավորությանն առնչվող քրեական գործերը քննվում են ընդհանուր իրավասության դատարանների կողմից, իսկ հետագայում, անհրաժեշտության դեպքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից և կարող են բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատ: Որոշ պետություններում գործում են առանձին դատարաններ, որոնք քննում են կազմակերպված հանցավորությանն առնչվող գործեր: Հարկ է նշել, որ Ռուսաստանի Դաշնության «Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» Դաշնային օրենքի նախագիծը նախատեսում է մասնագիտացված դատարանների ստեղծում: Դա անհրաժեշտություն է նաև ՀՀ-ում:

Ինչպես արդեն նշվել է, հանցավոր խմբերի և համայնքների անօրինական ֆինանսական գործարքներին հակազդելու միջոցառումներն առանձնահատուկ նշանակալի տեղ են գրավում կազմակերպված հանցավորութ-

յան դեմ պայքարի ոլորտում, քանի որ կազմակերպված հանցավորության ապօրինի գործունեության հիմքերը ապահովվում են ֆինանսական միջոցների օրինականացման (լվացման) միջոցով: Այդ կապակցությամբ է, որ ՀՀ Կենտրոնական բանկը ընդգրկված է նաև այն պետական մարմինների շարքում, որոնք կազմակերպված հանցավորության դեմ պայքարն իրականացնում են իրենց իրավասությունների սահմաններում: Մասնավորապես, 2004 թվականին ՀՀ Ազգային ժողովի կողմից «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո Կենտրոնական բանկին տրվել են որոշակի գործառույթներ, որոնք ուղղված են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցների ապահովմանը: Այդ ուղղությամբ աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով Կենտրոնական բանկում ստեղծվել է անօրինական ճանապարհով ստացված միջոցների լեգալիզացման (լվացման) դեմ պայքարի նոր վարչություն:

Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման խստագույն վերահսկողությունը կարևոր գործոն է անդրազգային կոռուպցիայի դեմ պայքարում:

Հաճախ հենց փողերի լվացման կառուցակարգերի կիրառումն է կաշառակերներին (կոռուպցիան) բերում է գործունեության միջազգային մակարդակ: Փողերի լվացման բոլոր ձևերի անթույլատրելիության և բացահայտման նպատակով Հանրապետությունում սահմանվել է ներքին կարգավորման և վերահսկողության ռեժիմ՝ կապված բանկերի և ոչ բանկային ֆինանսական հաստատությունների, ինչպես նաև այլ մարմինների հետ, որոնք հատկապես խոցելի են փողերի լվացման տեսանկյունից: Նման ռեժիմը հիմնված է հաճախորդների նույնականացման, հաշվետվությունների և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման պահանջների վրա: Այս վարչությունը սերտ համագործակցում է ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի հետ (այսուհետ՝ ՀՀ ԿԲ ՖԴԿ): Այս համագործակցության շրջանակներում որոշակի պայմանավորվածություններ են ձեռք բերվել կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկատվության արագ արձագանքման և (կամ) արագ փոխանցման վերաբերյալ: Վարչությունը համակարգում է ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, պետական եկամուտների կոմիտեի և ՀՀ կենտրոնական բանկի ՖԴԿ գործողությունները՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում: Եթե ՀՀ ԿԲ ՖԴԿ տեղեկատվություն է ստանում կասկածելի գործարքների վերաբերյալ, ապա տվյալներն անմիջապես փոխանցվում են ՀՀ ԱԱԾ և ՀՀ գլխավոր դատախազություն: Հիմքերի առկայության դեպքում հարուցվում է քրեական գործ ՀՀ Քրեական Օրենսգրքի 190-րդ հոդվածով: Համագործակցության արդյունավետության բարձրացման նպատակով 2008թ. ՀՀ ոստիկանության, հարկային և մաքսային մարմինների, ազգային անվտանգության ծառայության, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկի միջև կնքվել են փոխըմբռնման և համագործակցության հուշագրեր:

Կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացման, ինչպես նաև ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման նպատակով 2019 թվականին հունիսի 24-ին ՀՀ վարչապետի որոշմամբ ՀՀ-ում ստեղծվեց Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ և 3 հոկտեմբերի 2019 թվականի N 1332-Ն ՀՀ Կառավարության որոշումով հաստատվեց հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը:

Հանցավոր գործունեության այնպիսի տեսակների, ինչպիսիք են ապօրինի տեղափոխումը, ՀՀ-ից վերաբնակեցումը և մարդկանց շահագործումը (շահագործման նպատակով) (թրաֆիքինգ) հակազդման նպատակով, 2002 թ. ստեղծվել է Թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողով (ՀՀ վարչապետի 2002 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 591-Ա որոշումը որոշումը): Այս հանձնաժողովի գործունեության ընդհանուր համակարգումը վերապահվել է ՀՀ արտաքին գործերի նախարարությանը: Հանձնաժողովում ընդգրկված էին բոլոր համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների ներկայացուցիչներ, Ազգային ժողովի և ՀՀ կառավարության փորձագետներ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հանձնաժողովին հանձնարարվել էր մշակել թրաֆիքինգի հակազդման ազգային ծրագիր (ՀՀ կառավարության 2004 թ. հունվարի 15 -ի թիվ 58-Ն որոշումը): Այնուամենայնիվ, ի սկզբանե հանձնաժողովին չի տրվել այս ոլորտում պետական կառույցների աշխատանքը համակարգելու գործառույթ, և նրա որոշումները պարտադիր չեն նախարարությունների համար: Այս կապակցությամբ, արդեն 2007-ին, ՀՀ Վարչապետի որոշմամբ, ստեղծվել է ՀՀ Մարդկանց շահագործման (Թրաֆիքինգի) խորհուրդ, որը փոխարինել է Հանձնաժողովին (ՀՀ վարչապետի 2007 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 861-Ա որոշումը):

Շատ պետություններ սկսել են մշակել կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մարտավարություն և մեխանիզմներ ինչպես երկկողմ, այնպես էլ տարածաշրջանային և համընդհանուր մակարդակներում:

Հայաստանի Հանրապետության կողմից կազմակերպված հանցավորության դեմ պայքարը տարածաշրջանային մակարդակում

ԱՊՀ շրջանակներում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ոլորտում համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հաստատվել են Ներքին գործերի նախարարների խորհրդի 2008-2010 թթ. հանցավորության դեմ պայքարի համատեղ միջոցառումների միջպետական ծրագրի իրականացման պլանը, 2011-2013 թթ. մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի և 2011-2013 թթ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ԱՊՀ անդամ պետությունների համագործակցության ծրագրերը, 2011-2013թթ. Ահաբեկչության և ծայրահեղակա-

նության այլ բռնի դրսևորումների դեմ պայքարի ծրագիրը, ինչպես նաև 2011–2013 թթ. հանցավորության դեմ պայքարի միջպետական ծրագիրը (ծրագրի ամբողջ տեքստը տես Исполнительный комитет СНГ) , 2014–2018 թթ. մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագիրը (ԱՊՀ շրջանակնե-րում), 2019–2023 Հանցավորության դեմ պայքարի համատեղ միջոցների միջպետական Ծրագիր (ԱՊՀ մասնակից պետությունների, ներառում է նաև թրաֆիքինգի դեմ պայքարը), 2020–2022թթ. Ահաբեկչության և ծայրա-հեղականության այլ բռնի դրսևորումների դեմ պայքարի ծրագիրը:

Վերը նշված ծրագրերը վկայում են կազմակերպված հանցավորության դեմ ուղղված պայքարի ուժեղացման մասին:

Տարածաշրջանային մակարդակում Հայաստանը նույնպես ակտիվորեն համագործակցում է այնպիսի միջազգային կառույցների հետ, որոնք զբաղ-վում են փողերի լվացման դեմ պայքարի և ահաբեկչության ֆինանսավոր-ման հետ կապված խնդիրներով, ինչպիսիք են FATF-ը (փողերի լվացման դեմ պայքարի ֆինանսական միջոցների մշակման խումբը) և MONEYVAL-ը (Եվրոպայի Խորհրդի փողերի լվացման դեմ պայքարի միջոցների գնա-հատման փորձագետների Կոմիտեն): Համագործակցության արդյունքում զգալիորեն աճել է փողերի լվացման բացահայտված դեպքերի քանակը: Այսպես, 2005 թ.-ին ՀՀ իրավապահ մարմինների կողմից հարուցվել է ըն-դամենը 2 գործ՝ Քր.օր. 190-րդ հոդվածի հատկանիշներով՝ հանցավոր ճա-նապարհով ստացված եկամուտների օրինականացնելը (փողերի լվացու-մը), մինչդեռ 2009-ին դրանց թիվը հասել է 22-ի, 2013-ին՝ նմանատիպ փաստերով հարուցվել է 14 քրեական գործ, իսկ 2015–2019 ‘67 գործ (www.police.am):

ՀՀ ԱԱ մարմինների նորագույն պատմությունը նշանավորվեց թշնամա-բար տրամադրված որոշ պետությունների, կազմակերպությունների ու առանձին անձանց հետախուզական և քայքայիչ գործունեությունն ի հայտ բերելու, կանխարգելելու և խափանելու ուղղությամբ գրանցված հաջո-ղություններով, այդ թվում՝ օտարերկրյա հատուկ ծառայությունների գոր-ծակալների բացահայտումներով: Ընդհանուր առմամբ 1991–2019 թթ. ՀՀ ազգային անվտանգության մարմինների կողմից հարուցվել և քննվել է ավելի քան 1800 քրեական գործեր: 23 անձինք քրեական պատասխանատ-վության են ենթարկվել ՀՀ դեմ հետախուզական և ահաբեկչական բնույթի գործունեության համար (ՀՀ ԱԱԾ):

Եզրակացություն

Ամփոփելով վերը նշվածը, կարելի է փաստել, որ չնայած կազմակերպ-ված հանցավորության դեմ պայքարի սուբյեկտների համակարգի ստեղծ-մանը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում, դեռևս նկատվում է կազմակերպված հանցավորության աճ, հատկապես՝ անդ-րազգային: Անհրաժեշտ է բարձրացնել գործողությունների համակարգման ոլորտում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մեխանիզմ կազմող Հայաստանի Հանրապետության պետական մարմինների գործու-

նեության արդյունավետությունը: Ներկայումս, հանցավորության դեմ պայքարի և հանցագործությունների բացահայտման մակարդակը բարձրացնելու համար: Կառավարությանը և այլ պետական մարմիններին անհրաժեշտ է ոչ միայն ուժեղացնել պայքարը կազմակերպված հանցավորության դեմ, այլև ապահովել համակարգված և համապարփակ մոտեցում՝ հանցագործության կանխման նպատակով: Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է մշակել և կիրառել այդ ոլորտը կանոնակարգող հատուկ օրենսդրություն, կազմակերպված հանցավորության հատուկ ոլորտներին հակազդման համար ստեղծել հատուկ ստորաբաժանումներ, ապահովել դատական համակարգի անկախությունը, քրեական դատավարության գործընթացի մասնակիցների, ներառյալ վկաների, զոհերի պաշտպանությունը հանցավոր խմբերի անդամների հանցավոր ոտնձգություններից:

Կազմակերպված հանցավորության արդյունավետ հակազդումը անհնար է առանց համապատասխան իրավական դաշտի ստեղծման, ինչպես նաև կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ոլորտում ներգրավված մարմինների աշխատողների կարողությունների զարգացման ծրագրերի մշակման և իրականացման:

Առաջնային խնդիրներից է «Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի մշակումը և ընդունումը: Օրենքը պետք է սահմանի կազմակերպված հանցավորության դեմ պայքարի սուբյեկտների շրջանակը, նրանց լիազորությունների սահմանները, այլ պետական մարմինների հետ նրանց փոխգործակցության հիմքերը, այս երևույթի դեմ պայքարի միջոցները: Կազմակերպված հանցավորությանը արդյունավետորեն հակազդելու համար անհրաժեշտ է կազմակերպել վերը նշված բոլոր մարմինների միջև պատշաճ համագործակցություն, ինչպես նաև այդ մարմինների անձնակազմի, նյութական, տեխնիկական և տեղեկատվական ապահովում:

Օգտագործված գրականության ցանկ

ՀՀ նախագահի 1992 թ. սեպտեմբերի 1-ի թիվ ՆՀ-150 *«Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ուժեղացման միջոցառումների մասին»* հրամանագիրը: https://www.president.am/ru/contact-us/ (մուտք՝12.09.2020)

ՀՀ վարչապետի 2002 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 591-Ա որոշումը: https://www.parliament.am (մուտք՝12.09.2020)

ՀՀ կառավարության 2004 թ. հունվարի 15 -ի թիվ 58-Ն որոշումը: https://www.irtek.am/views/act.aspx?aid=23888 (մուտք՝12.09.2020)

ՀՀ վարչապետի 2007 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 861-Ա որոշումը: https://www.parliament.am (մուտք՝12.09.2020)

Уголовно-правовая Конвенция по противодействию коррупции и дополнительные протоколы были приняты решениями Национального собрания РА №№ Н105-3 и Н106-3 от 8 июня 2004 года. ՀՊՏ 2004.06.30/34(333) https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=4202, ՀՀՊՏ 2004.06.30/34(333) https://

www.arlis.am/DocumentView.aspx?DocID=4203 (մուտք՝12.09.2020)

Гражданско-правовая Конвенция по противодействию коррупции, принята Национальным Собранием РА решением № Н-158-3 от 8 декабря 2004 года»: ՀՀՊՏ 2005.01.12/2(374) https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=4255 (մուտք՝12.09.2020)

Конвенция ООН по борьбе с коррупцией была подписана в Нью-Йорке, США, Чрезвычайным и полномочным послом Армении в США 19 мая 2005 года. https://base.garant.ru/2563049/ ՀՀԱԳՆՊՏ 2008.02.11/9(17) https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=48021 (մուտք՝12.09.2020)

Закон Кыргызской Республики N 122 от 22 июля 2011 г. *«О противодействии организованной преступности».* http://cbd.minjust.gov.kg/act/view/ru-ru/203362

Акопян, Р.Х. (2006) *Организованная преступность и проблемы ответственности за организованную преступную деятельность.* Ер.: ВМВ-ПРИНТ.

Иванцов, С.В. (2018). *Актуальные вопросы развития системы субъектов предупреждения организованной преступности: состояние и перспективы совершенствования* // Правовые аспекты государственного и социальные управления. Москва.

Хачатрян, А.Г. (2003). *Налоговое право.* Ереван.

http://www.police.am (ՀՀ ոստիկանություն)

https://www.sns.am (ՀՀ ազգային անվտանգության ծառայություն)

http://www.cis.minsk.by (Исполнительный комитет СНГ)

References

HH nakhagahi 1992 t. septemberi 1-i tiv NH-150 *"Kazmakerpvats hantsavorutyan dem paykari uzheghatsman mijotsarrumneri masin"* hramanagiry [On Measures to Strengthen the Fight against Organized Crime]. https://www.president.am/ru/contact-us/ (accessed: 12.09.2020). (In Arm.)

HH varchapeti 2002 tvakani hoktemberi 14-i tiv 591-A voroshumy [Decision No. 591-A of the Prime Minister of the Republic of Armenia]. https://www.parliament.am (accessed: 12.09.2020). (In Arm.)

HH karravarutyan 2004 t. hunvari 15 -i tiv 58-N voroshumy [RA Government Decision No. 58-N]. https://www.irtek.am/views/act.aspx?aid=23888 (accessed: 12.09.2020). (In Arm.)

HH varchapeti 2007 tvakani dektemberi 6-i tiv 861-A voroshumy voroshumy [Decision No. 861-A of the Prime Minister of the Republic of Armenia]. https://www.parliament.am (accessed: 12.09.2020). (In Arm.)

Ugolovno-pravovaya Konventsiya po protivodeystviyu korruptsii i dopolnitel'nyye protokoly byli prinyaty resheniyami Natsional'nogo sobraniya RA [The Criminal Law Convention against Corruption and additional protocols were adopted by the decisions of the National Assembly of the Republic of Armenia] №№ N105-3 i N106-3 ot 8 iyunya 2004 goda. HPT 2004.06.30/34(333) https://www.arlis.am/Docu-

mentView.aspx?DocID=4202; ՀՀՊՏ 2004.06.30/34(333) https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=4203 (accessed: 12.09.2020). (In Rus.)

Grazhdansko-pravovaya Konventsiya po protivodeystviyu korruptsii [The Civil Law Convention on Combating Corruption], prinyata Natsional'nym Sobraniyem RA resheniyem № N-158-3 ot 8 dekabrya 2004 goda»: ՀՀՊՏ 2005.01.12/2(374) Hod.30. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=4255 (accessed: 12.09.2020). (In Rus.)

Konventsiya OON po bor'be s korruptsiyey [The UN Convention against Corruption] byla podpisana v N'yu-Yorke, SSHA, Chrezvychaynym i polnomochnym poslom Armenii v SSHA 19 maya 2005 goda. https://base.garant.ru/2563049/ ՀՀԱԳՊՏ 2008.02.11/9(17) https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=48021 (accessed: 12.09.2020). (In Rus.)

Zakon Kyrgyzskoy Respubliki N 122 ot 22 iyulya 2011 g. «O protivodeystvii organizovannoy prestupnosti» [On Combating Organized Crime]. http://cbd.minjust.gov.kg/act/view/ru-ru/203362 (In Rus.)

Akopyan, R.KH. (2006) Organizovannaya prestupnost' i problemy otvetstvennosti za organizovannuyu prestupnuyu deyatel'nost' [(2006) Organized Crime and Problems of Accountability for Organized Crime]. Yer.: VMV-PRINT. (In Rus.)

Ivantsov, S.V. (2018). Aktual'nyye voprosy razvitiya sistemy sub"yektov preduprezhdeniya organizovannoy prestupnosti: sostoyaniye i perspektivy sovershenstvovaniya [Topical issues of development of the system of subjects of organized crime prevention: state and prospects of improvement] //Pravovyye aspekty gosudarstvennogo i sotsial'nyye upravleniya. Moskva. (In Rus.)

Khachatryan, A.G. (2003). Nalogovoye pravo [Tax law]. Yerevan. (In Rus.)

http://www.police.am (ՀՀ vostikanut'yun) [RA Police] (In Arm.)

https://www.sns.am (ՀՀ azgayin anvtangutyan tsarrayutyun) (RA National Security Service) (In Arm.)

http://www.cis.minsk.by (Ispolnitel'nyy komitet SNG) [CIS Executive Committee] (In Rus.)

Илона Григорян
Соискатель Российско-Армянского университета,
Юрист ООО «Арсруно»
Эл.адрес: ilona.grigoryan.87@mail.ru

ПОНЯТИЕ, ВИДЫ И ФУНКЦИИ СУБЪЕКТОВ, ПРОТИВОДЕЙСТВУЮЩИХ ОРГАНИЗОВАННОЙ ПРЕСТУПНОСТИ

В данной статье автор представил механизмы борьбы разными субъектами с организованной преступностью, которая направлена на выявление преступных групп и сообществ, выдвинут ряд законодательных предложе-

ний, направленный на повышение эффективности борьбы с организованной преступностью. Подчеркнута необходимость законодательных изменений, создания отдельных специализированных структур и разработки целевых программ.

Ключевые слова: организованная преступность, терроризм, отмывание денег, преступная деятельность, предупреждение, противодействие.

Ilona Grigoryan
Ph.D. student at Russian-Armenian University,
Lawyer of "Arsruno" LLC
Email: ilona.grigoryan.87@mail.ru

THE CONCEPT, TYPES AND FUNCTIONSOF COUNTERACTING SUBJECTS OF ORGANIZED CRIME

Theauthorpresents a mechanism used by different actors to fight against organized crime, aimed at identifying criminal groups and collaborations. The article presents legislative recommendations to enhance the effectiveness in the fight against organized crime.The need for legislative changes, creation of separate divisions and development of targeted programs is emphasized.

Key Words:organized crime,terrorism,money laundering, criminal activity, warning, opposition.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել 2020թ. սեպտեմբերի 22-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման 2020թ. սեպտեմբերի 29-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության 2020թ. հոկտեմբերի 18-ին: